Ազատեկ

Բնակչության թիվը՝ 582

Հնագիտական հետազոտությունները ենթադրել են տալիս, որ Ազատեկը հին Ազատ գյուղն է: Գյուղում պահպանված մշակութային արժեքների մնացորդները վերաբերվում են ճիշտ այդ ժամանակաշրջանին: Գյուղամիջի սուրբ Ստեփանոս եկեղեցու մուտքի ճակատաքարի արձանագրությունից երևում է, որ եկեղեցին կառուցվել է Ազատեկի գյուղական հասարակության կողմից, Հակոբ չորրորդ կաթողիկոսի ժամանակ, 17-րդ դարի 2-րդ կեսին և վերակառուցվել է Սալմաստից գաղթած հայերի կողմից 19-րդ դարի 30-ական թվականներին, լրացնելով քանդված ծածկը և պատերի վերին մասերը: Եկեղեցու պատերի և մույթերի մեջ օգտագործված են հին տապանաքարեր և խաչքարեր՝ արձանագրության մնացորդներով, որոնք բնորոշ են 13-14-րդ դարերին:

Ըստ Ամաղու-Նորավանքի մի արձանագրության տեղեկությունների՝ Սմբատ Օրբելյանն Ազատ գյուղն իր սահմաններով, շրջակա լեռներով ու դաշտերով նվիրել է Նորավանքին:
Գյուղից երկու կիլոմետր դեպի հարավ-արևմուտք, ձորաբերանին գտնվում է Սուրբ Հակոբ ուխտատեղին, որի ներսում կա մի գերեզման: Համաձայն գերեզմանի տապանագրության՝ այն պատկանում է ոմն Հակոբի և թվագրված է 1607 թվական: Ենթադրվում է, որ այդ պատճառով էլ նրա վրա կառուցված մատուռ-ուխտատեղին կոչվում է Սուրբ Հակոբ: Այս մատուռից մի քանի քայլ դեպի հարավ-արևելք, սարալանջին կան երեք գերեզմաններ և հարակից մի փոքր քանդակազարդ խաչքար, որն ըստ տվյալների՝ կանգնեցրել են Գրիգորը և իր կինն իրենց որդու՝ Հունան քահանայի գերեզմանի վրա 1222 թվականին: Գյուղից դեպի հարավ-արևելք գտնվում է Սուրբ Վառվառա բերդ-ամրոցը, որը թվագրվում է ք. ա. առաջին հազարամյակին: Ամրոցն ունեցել է մեծապես պաշտպանական նշանակություն:

Ազատեկ գյուղի տարածքում կան շատ մատուռներ, իրենց 13-14-րդ դարերին բորոշ խաչքարերով, որոնցից պատմամշակութային արժեք են ներկայացնում Սուրբ Գևորգ և Սուրբ Շողակաթ մատուռները: Նշված մատուռները տեղի բնակչության շրջանում հայտնի են հիվանդություններ բուժելու հատկություններով:
Իր յուրահատուկ և բարդ կառուցվածքով պատմամշակույթային մեծ արժեք է ներկայցնում գյուղի կենտրոնում գտնվող աղբյուրը, որի շուրջն էլ 1828 թվականին Խոյից և Սալմաստից գաղթած հայերը հիմնել են գյուղը:
Ազատեկ գյուղը գտնվում է ծովի մակերևույթից 1640 մետր բարձրության վրա: Մարզկենտրոնից 23 կմ, իսկ Վայք քաղաքից 7 կմ հեռավորության վրա: Ճանապարհորդների շրջանում հետաքրքրություն է առաջացրել Վայք–Ազատեկ ոլորապտույտ բարեկարգ ճանապարհը: Գյուղը սահմանակից է Վայքի քաղաքային համայնքին: Սահմանակից է նաև Փոռ, Մարտիրոս, Զառիթափ, Խնձորուտ, Գնիշիկ, Ագարակաձոր և Զեղեա գյուղական համայնքներին:

Գյուղը շրջապատված է վեհ ու հիասքանչ լեռնաշղթաներով, որոնք հարուստ են ֆլորայով և ֆաունայով:

Ազգաբնակչությունը հիմնական զբաղվում է հողագործությամբ, այգեգործությամբ, անասնապահությամբ ու մեղվաբուծությամբ: Նախկինում գյուղում զբաղվել են նաև մետաքսագործությամբ:

Գյուղն ունի միջնակարգ դպրոց, մանկապարտեզ, մշակույթի տուն, վարչական շենք, բուժկետ, կենցաղ սպասակման օբյեկտներ: Այն գազաֆիկացված է և ամբողջովին հեռախոսաֆիկացված: